ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐԲԱՌԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՈՒՇԱԳՐԱՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հայերենագիտության կարևորագույն ճյուղերից մեկը՝ բարբառագիտությունը, մշտապես եղել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Բարբառագիտական աշխատանքները հայ լեզվաբանության երախտավորներ Հ. Աճառյանի, Գ. Ջահուկյանի, Ա. Ղարիբյանի, Է. Աղայանի և այլ ուսումնասիրողների գիտական վաստակի կարևորագույն մասն են կազմում: Հայերենի առանձին բարբառների քննությունը, բարբառային բառարանների կազմումը, բառապաշարի շերտերի, բարբառներում իմաստային խմբերի ուսումնասիրության խնդիրներն այսօր էլ արդիական են:

Եվ այս առումով կարևոր է Խաչատուր Թահմազի «Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը» աշխատության հրատարակումը[1]:

Համշենահայ Խ. Թահմազը, որ ծնվել է 1941 թ. Աբխազիայի Գագրայի շրջանի Մախադիր գյուղում, մասնագիտությամբ ինժեներ է[2]: Մայրենի բարբառի հանդեպ սերը, սակայն, նրան ստիպել է մեկ առ մեկ հավաքել, գրի առնել Համշենի բարբառային բառերը և 2014 թ. հրատարակել «Ջենիկի խոսվածքի բառարանը»[3]: Բարբառախոս և բարբառակիր հեղինակը այս բառարանին կից համառոտ ներկայացրել է «Պոնտահայերի բարբառի քերականություն, Ջենիգի ենթաբարբառ» հավելվածը[4], որն էլ, ըստ երևույթին, հետագայում նոր ուսումնասիրության մտահղացման առիթ է դարձել: Եվ ահա վերջերս լույս է տեսել նույն հեղինակի «Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը» աշխատությունը[5], որում բավականին հանգամանալից և մանրամասն ներկայացված են այդ բարբառի լեզվական հատկանիշները:

Այս կարևոր աշխատանքը բարբառային նյութերով համալրել, խմբագրել և հրատարակության է պատրաստել բարբառագետ, բ. գ. դ.

---

[1] Խ. Թահմազ, Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը, Ե., 2023, 224 էջ:

[2] В. Менакеци, Душа Амшена, Сочи-Туапсе, 2013:

[3] Խ. Թահմազ, Ջենիգի բարբառի բառարան, Սոչի, 2014, 253 էջ:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 221-253:

[5] Խ. Թահմազ, Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը,Ե., 2023:

Հ. Հ. Մեսրոպյանը: Գրքում նա իրավացիորեն գրում է հետևյալը. «Չնայած Հ. Աճառյանը «Քննություն Համշենի բարբառի» գրքում Մալայի, Տրապիզոնի տարածաշրջանի բարբառային հատկանիշները ներկայացնելիս զուգահեռաբար անդրադառնում է նաև Ճենիկի խոսվածքի առանձնահատկություններին, բայց և նման աշխատանքն անհրաժեշտաբար լրացնում և ամբողջական է դարձնում խոսվածքի բարբառագիտական նկարագիրը»[6]:

Աշխատությունը բաղկացած է «Ներածություն», «Հեղինակի նախաբան», «Հնչյունաբանություն», «Բառագիտություն», «Քերականական զուգաբանություններ», «Շարահյուսական իրողություններ» և «Հավելված» բաժիններից:

Ներածական մասումխմբագիր Հ. Մեսրոպյանը ներկայացնում է Խ. Թահմազի աշխատանքը՝ այն համալրելով ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ձեռագիր նյութերով, որոնք, ըստ նրա, հնարավոր են դարձնում այդ արժեքավոր անտիպ նյութերի հանրայնացումը: Խմբագիրը նաև տվյալներ է հաղորդում Համշենի և համշենահայերի մասին և ներկայացնում Համշենի բարբառի ընդհանուր բնութագիրը:

Խ. Թահմազը առաջաբանում խոսում է Ջենիկ գավառի մասին, որը տարածվում է Օրդու և Սամսուն քաղաքների միջև՝ հասնելով Պախարա լեռնաշղթայի լեռնագագաթները: Հեղինակը, հետևելով Հ.Աճառյանի այն դիտարկմանը, որ Ջենիգի խոսվածքը կարիք ունի լրացուցիչ ուսումնասիրության, հարկ է համարել իր «լուման ներդնել ի նպաստ համշենագիտության»:

«Հնչյունաբանություն» բաժնում հեղինակը անդրադառնում է Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքի ձայնավորների հնչյունափոխություններին, բաղաձայնների և երկբարբառների փոփոխություններին: Հետաքրքրական է հատկապես, որ ներկայացնելով Հ. Աճառյանի տեսակետը, թե Համշենի բարբառում թրթռուն բաղաձայնները մալացոց նման հնչում էին շնչեղ *բ՛*, որից էլ լեզվաբանը եզրակացրել է, որ բ>պ ձայնափոխությունը հետո է առաջացել նոր գաղութում[7], Խ. Թահմազը, որպես կարևոր դիտարկում, նշում է, որ բուն Համշենում բնակվողները թեև նոր

[6] Խ. Թահմազ, Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը, Ե., 2023, էջ 3:

[7] Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Ե., 1947, էջ 76:

գաղթավայրի ազդեցություն չեն կրել, սակայն բառասկզբի ձայնեղները խլացնում են[8]:

Երկրորդ՝ «Բառագիտություն» գլխում հեղինակը ներկայացնում է Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքի նույնանուն (համանուն) բառերը, հոմանիշները: Ըստ Թահմազի՝ խոսվածքում հոմանիշների շարքը համալրվում է սեփական բառակազմական միջոցներով կազմված բառերով, վերջիններիս տարբեր կարգի հնչյունափոխություններով, փոխաբերական իմաստներով, բառակապակցություններով, դարձվածքներով, նկարագրական եղանակով կազմված արտահայտություններով, ինչպես նաև փոխառություններով[9]: Քննության են ենթարկվել նաև մենիմաստ և բազմիմաստ բառերը: Այս գլխում անդրադարձ է կատարվում խոսվածքի բառակազմությանը՝ բառապաշարը բաժանելով պարզ և բաղադրյալ բառերի, իսկ վերջիններս էլ՝ վերլուծական և համադրական բաղադրությունների:

Ուշագրավ է հատկապես երրորդ՝ «Քերականական զուգաբանություններ» գլուխը, որում մանրամասն ու հանգամանալից ներկայացվում են Համշենի բարբառում գործառող գոյականի քերականական կարգերը՝ հոգնակիի կազմությունը, հոլովումը, առկայացման կարգը: Հեղինակի ուշադրությունից չեն վրիպել ածականի և թվականի, դերանվան քերականական հատկանիշները: Անդրադարձ է կատարվում նաև բայի քերականական առանձնահատկություններին: Բայական համակարգում, ինչպես գիտենք, առանձնակի հատկանիշ է դրսևորում անորոշ դերբայը: Գրաբարյան *-ել, -ալ, -իլ, -ուլ* լծորդական ձևերի դիմաց Ջենիկի խոսվածքն ունի մեկ՝ *-ուշ* վերջավորություն:

Խ. Թահմազը այս գրքում բարեխղճորեն ներկայացնում է Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքի բայի դրական և ժխտական խոնարհման հարացույցները: Ըստ հեղինակի՝ դիմավոր ձևեր կազմելիս հարակատար դերբայով արտահայտվում է նաև վաղակատարի իմաստ: Խ. Թահմազը կարևոր դիտարկում է անում՝ փաստելով, որ Ջենիկի խոսվածքում հարակատար դերբայով դիմավոր ժամանակաձևերը կազմվում են երկու եղանակով՝ 1) հարակատար դերբայի և օժանդակ բայի խո-

[8] Խ. Թահմազ, նշվ. աշխ., էջ 58:

[9] Տե՛ս նույն տեղում, էջ 70:

նարիված ձևերի և 2) հարակատար դերբայի և *ունեմ* բայի ներկա և անցյալ դիմավոր ձևերի զուգորդմամբ:

Ըստ աշխատության հեղինակի՝ Ջենիկի խոսվածքի բայական համակարգի առանձնահատկություններից է մի շարք բայերի անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքի կազմությունը կրավորաձև վերջավորություններով:

«Քերականական զուգաբանություններ» գլխում անդրադարձ է կատարվել նաև երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերին: Ջենիկի խոսվածքի *ընուշ («անել»), օննուշ(«ունենալ»), ուզուշ («ուզենալ»)* բայերի միջոցով կազմվում են երկրորդական բաղադրյալ ժամանակաձևեր, որոնք խոսվածքում բավականին կենսունակ են:

Երրորդ գլխում ներկայացված են նաև խոսվածքում գործառող մակբայները, կապերը, շաղկապները, ձայնարկությունները, եղանակավորող բառերը:

Չորրորդ գլխում համառոտ ներկայացվում են շարահյուսական որոշ իրողություններ: Դրանցից այստեղ կարևորում ենք հատկապես նպատակի պարագայի դրսևորումը՝ Համշենի բարբառի անորոշ դերբայով յուրահատուկ կազմությամբ («*Կընած այդը ճըրուշ*»):

Աշխատանքի վերջում զետեղված է Հովի. Թումանյանի «Սուտասանը» հեքիաթի՝ Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքով տարբերակը: Բ. գ. թ. Ջ. Բառնասյանը նշված հեքիաթի բարբառային տարբերակի կարևորության մասին գրում է. «Թումանյանն իր այս՝ կարճ, սրամիտ առարկություններով խոսքուզրույցի վրա կառուցված հեքիաթում ներկայացրել է ժողովրդի խոսքին հատուկ լեզվաոճական հնարքներ, և դրանք շատ դեպքերում անթարգմանելի են՝ հատկաբանության (իդիոմ) արժեքով: Ուստի և այդ հեքիաթը հայերենի որևէ բարբառով ներկայացնելիս (թարգմանելիս) ի հայտ են գալիս այդ տարածքի խոսվածքներում գործառող հետաքրքիր բառանվանումներ, բառիմաստային հետաքրքիր զուգաձևություններ»[10]:

Այսպիսով՝ մեր դիտարկումը ամփոփ հետևյալն է. Խ. Թահմազի «Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը» աշխատանքը կարևոր ներդրում է հայ բարբառագիտության բնագավառում: Գրքի հեղինակը թեև

[10] Ջ. Բառնասյան, Հ. Թումանյանի «Սուտասանը» հեքիաթի գրառումները հայերենի տարբեր բարբառներով // «Ջահուկյանական ընթերցումներ», Ե., 2019, էջ 15:

չունի մասնագիտական կրթություն և մասամբ թերացել է գիտական և տեսական ընդհանուր եզրահանգումներ կատարելիս, սակայն դա չի նսեմացնում ուսումնասիրության արժեքը: Հայրենի հողի և արյան կանչով ստեղծված այս աշխատանքում Թահմազը կորստից փրկել և մասնագետների դատին է հանձնել Համշենի բարբառի մի խոսվածքի նկարագրությունը:

Ողջունելի է նման աշխատանքի ծնունդը և այն առումով, որ մի նվիրյալ համշենցի բարբառակիր, բարբառախոս հայորդի հավաքել, դասդասել է մայրենի բարբառի նյութը և այդպիսով նաև իր հարգանքի տուրքը մատուցել նախնիներին և ավետյաց երկրին:

Բանասիր. գիտ. թեկնածու Հ. Ռ. Խաչատրյան